

Երեւանում գերմաներենի ուսուցման նոր կենտրոն է բացվել



Ապրիլ 17, 2012 | 18:47

Երեւանում այսօր՝ ապրիլի 17-ին, բացվել է գերմաներենի ուսուցման նոր կենտրոն, որը Հայաստանում հանդես է գալիս որպես Գյոթեի անվան ինստիտուտի ներկայացուցիչը եւ գործընկերը: Բացման արարողությանը մասնակցել են ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանն ու պաշտոնական այցով մեր երկրում գտնվող Գերմանիայի արտաքին գերատեսչության պետնախարար Կորնելիա Պիպերի գլխավորած պատվիրակությունը:

ԿԳՆ մամուլի ծառայությունից [NEWS.am](http://news.am)-ին հայտնում են, որ մինչ բացման արարողությունը՝ նախարար Արմեն Աշոտյանն ու Գերմանիայի ԱԳ պետնախարար Կորնելիա Պիպերը պաշտոնական հանդիպում են ունեցել, որի ընթացքում քննարկվել են հայ-գերմանական կրթական համագործակցությանն ու հեռանկարներին առնչվող հարցեր: Կարելուրվել է գերմաներենի՝ որպես օտար լեզվի ուսուցման որակի բարելավումը: Նախարարը պատրաստակամություն է արտահայտել աջակցելու, որպեսզի գերմաներենի ուսուցումը Հայաստանում դրվի ավելի լավ հիմքերի վրա: Նախարար Արմեն Աշոտյանն առաջարկել է Հայաստանում գերմանական կողմի աջակցությամբ հիմնել գերմաներենի խորացված ուսուցմամբ ավագ դպրոց:

Այնուհետեւ Կորնելիա Պիպերը եւ Արմեն Աշոտյանը մասնակցել են գերմաներենի ուսուցման կենտրոնի բացմանը: ՀՀ ԿԳ նախարարը, շնորհավորելով նորաբաց կենտրոնի մուտքը կրթական համակարգ, նշել է, որ վերջին մի քանի տարիներին հայ-գերմանական կրթական ծրագրերի ծավալը եռակի աճել է: «Գերմանիան մեր կարելուր կրթական գործընկերներից է: Մեր արժեհամակարգը խարսխված է կրթության վրա, ինչը կարելուր հանգամանք է եվրոպական ինտերգրացիայի ճանապարհին: Ես ուզում եմ հույս հայտնել, որ այս կենտրոնը կնպաստի, որ Հայաստանում բացվի Գյոթեի ինստիտուտի մասնաճյուղ», -նշել է Արմեն Աշոտյանը: Գերմանիայի ԱԳ պետնախարար Կորնելիա Պիպերը, իր ելույթում կարելուրելով կենտրոնի բացումը, շեշտել է. «Ես շատ ուրախ եմ, որ իմ առաջին պաշտոնական այցը Հայաստան համընկել է այս կենտրոնի բացմանը, ինչը երկկողմ քաղաքական հարաբերությունների արդյունք է: Ես հուսով եմ, որ Գերմաներեն լեզվի նորաբաց կենտրոնը կխթանի երկկողմ կրթական քաղաքականության զարգացմանը եւ կնպաստի, որ գերմաներենը Հայաստանի քաղաքացիների համար դառնա արդյունավետ հաղորդակցության միջոց»:

<http://news.am/arm/news/101638.html>